



Պատանխանատու
Յովհաննէս Փիլիսեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Նամակքն ուղղելի է
ստ. Ղ. Գ. Պալագարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՍԵՐՈՐԴ ՏՆՐԻ

ԶՄԻՌՆԻՈՅ ՇԱՐԱԹ 7 ՅՈՒՆԻՍ 1880

ԹԻՔ 1146

ՔԱՂԱՍԵՐՈՐԴ

ԱՆԳՂԻԱ : Նոր խորհրդարանը չբաղեցնող արդի խնդիրներուն մէջ առաջին տեղը կը բռնէ թուրքիոյ բարենորոգմանց յառաջացման խնդիրն : Այս մասին միահամուռ համաձայնութիւն կը տեսնենք երեսփոխանաց մէջ Պէրլինի դաշնագրին անգործողութեամբ մասնաւոր գործադրելու որակիցէ անորոշեցութեանց մէջ պատկան կալ միանգամայն վեհ : Սուլթանին վեհապետական իրաւանց և նորին երկիրներու ամբողջութեան ինչպէս առաջին նախարար Պ. կը տեսնենք նոյն պէս և արտաքին գործոց նախարար լորտ կրան վիլ կը պնդեն հաստատելով այն կարեւորութիւնը, զոր կը տեսնենք թուրքիոյ Պետութեան անկախութիւնը պահպանելու մէջ : Ահաւասիկ լորտ կրան վիլի կարեւոր բանախօսութեան մաս մի, զոր խորհրդարանին մէջ արտասանած է, և զոր Պրիւքսէլէն ՕՐ լրագիրն կը հրատարակէ : Սեր փափագն այն է, կըսէ աղիւ լորտն, որ Սուլթանին վեհապետութիւնը պահպանուի և նորին իշխանութեան երկիրներն ամբողջ մնան : Ասով հանդերձ մեր փափագն է նաև որ Սուլթանին վեհապետութիւնը բարձր և անդար կառավարութեամբ միասին տարածուի և ընթանայ իւր բազմութիւն հպատակաց անդորութե համար : Սեր նախորդ թուով ծանուցած էինք թէ լորտ կրան վիլի առ մեծ տէրութիւնս յաղարկած շրջաբերական ծանուցադ իրն երեք խնդիրներ կը պարունակէր, որոնք են Գարաաղի, Հեղինական և Հայկական խնդիրները : Այս վերջինին վրայ հետեւեալ կերպիւ կը խօսի ծանուցադիրն, զոր եւրոպական լրագիրներն հրատարակած են : Լորտ կրան վիլի ծանուցադ իրն Արմենիա երկրին աննպաստ վիճակը, բնիկ ժողովրդից թշուառութիւնն, իւրաքանչիւր ասպատակութեանց և անիրաւ վարչութեան պատճառաւ անպահովութեան իրաւ չգտնելը կը յայտնէ, և Բ. Դոնէն կը քննդրէ որ անմիջապէս տէրութեանց ծանուցանէ թէ ինչ միջոցներ

պատրաստած է յիշեալ երկրի խնդր վիճակին դարման տանելու համար :

Տէր Նիւզ լրագիրն կ'ըսէ թէ Անգլիոյ ազատական նախարարութիւնն նոր կապոյտ տետրակով մի Հայաստանի, փոքր Ասիոյ և Սիւրիոյ վիճակին ժողովրդոց կրնա հարստահարութեանց մի նոր նկարագիրն հրատարակած է, որ 155 տեղեկագիրք կը պարունակէ 1879 Յուլիս 7էն մինչև 1879 Դեկտ. 26 դրեթէ վեց ամսոյ մէջ խմբագրուած : Սոյն կապոյտ տետրակին մէջ յիշատակուած են նաև սըր Հէնրի Լէյարտի Պոլսոյ նախորդ դեսպանին Բ. Դոնէն քով յոյց անած ջանքերն, որ բարենորոգմանց գործադրութեանը փութացնելու մասին քրտն է փոքր դեսպանական պաշտօնավարութեան միջոցին :

Երեսփոխանութեան Մայիս 27ի նիստին մէջ լորտ Սթրաթեմը հարցում ուղղեց թէ Պ. Կոչըն Օսմանեան երեսփոխանական խորհրդարանին վերստին դումարումը չ'ախտի պահանջէ, և պատասխանի սոյն հարցման քրտն կրան վիլ յայտարարեց թէ թուրքիոյ բարենորոգմանց նախական միջոցներն վերջնական կերպիւ որոշուելու վրայ ըլլալով այս մասին պէտք եղած տեղեկութիւններն ընդ հուպ խորհրդարանին պիտի ներկայացուին : Յետոյ լորտ Սթրաթեմը, որ Անգլիոյ արտաքին գործոց նախորդ նախարարն էր, դիտողութիւն քրտն թէ Օսմանեան երեսփոխանութեան վերջին խորհրդարանն իւր թերութիւններէն ունէր, ունտի նոր խորհրդարանին համար պէտք կայ որ անպահովութիւնն ունենայ :

Պ. կը տեսնենք խորհրդարանին մէջ լորտ կրան վիլի մոտիկ քրտն երեսփոխանի մը դիտողութիւնը զոր կ'ընէր Պուլղարաց կողմէ իսլամաց դէմ եղած բռնութեանց նկատմամբ, և պատասխանեց թէ Գրիստոնէից և իսլամաց մէջ խորհրդութիւն չ'ընելով Անգլիոյ պիտի պահանջէ որ իրողութիւնը քննուելով յանցաւորները պատժուին : Այս ամեն քսածնէրէ յայտնի կը տեսնուի թէ Բրիտանական տէրութիւնն համաձայնութեամբ

միւս մեծ տէրութեանց նպատակ դրած է թուրքիոյ բարենորոգմանց գործադրութիւնն յառաջացնելու : Բաւականով որեւիցէ արդեւք մենք իւր աշխարհավարութեան պողոտային վրայ : Էաւագոյն ապացոյց մի կրնայ համարուիլ այնմ արտաքին գործոց նախարար լորտ կրան վիլի ստիպողական հրամանաւ սըր Հէնրի Լէյարտի ահապարանօք Կ. Պոլսէն մեկնելը, որ ըստ Գրիստոնէի «Սթրաթեմ» Անգլիոյ նոր նախարարութեան աշխարհավարութեան հակառակ խօսեցուն և գործելուն համար եղած է :

Պ. կը տեսնենք աղանդական դաշնակցութեան կողմէ Մայիս 25 թուով հեռագիր ընկալաւ : որով յիշեալ դաշնակցութեան գլուխներն Անգլիոյ առաջին նախարարի պաշտօնն կը շնորհաւորեն : Միանգամայն իրենց ազգային իրաւանց և հոգիին ամբողջութեան խնդրոց համար Անգլիոյ հզօր պաշտպանութիւնն կը հայցեն :

ՌՈՒՍԻԱ : Սոյն տէրութեան և Չինաստանի մէջ ժամանակէ մը ի վեր Գուլճայի խնդրոյն համար տիրող շրտութիւնն գծառութեան որոշ կերպարանք առաւ այս օրերն հետեւեալ պատճառաւ : Չինական պետութիւնն իբր քրէական օրոգործ գատի ներքին գրաւ իւր մէկ իշխանն, որ Գուլճայի խնդրոյն վրայ Ռուսիոյ հետ դաշնագրութիւն կնքած էր իւր դեսպանական յատուկ պաշտաման համեմատ : Եւ այս վերջինս յիշեալ Չինական դժբաղդ դեսպանն իւր կնաւազարութեան կողմէ ի մահ դատապարտեցաւ : Ասոր վրայ Ռուսիոյ կառավարութիւնն Բէքինի իւր դեսպանն ետ կանչեց, և Չինական պետութեան հետ իւր յարաբերութիւններն խզեց :

Ռուս լրագիրներն կը ծանուցանեն թէ Չինաց պետութիւնը Ռուսիոյ դէմ պատերազմելու համար ճարտի կնաւազարութեան դաշնակցութիւնը խնդրէր : Ենթադրեալ ճարտն ոչ միայն մեղծեր է, այլ նաև Ռուսիոյ հետ ունեցած իւր բազմամեայ բարեկամական յարաբերութիւններն ամբողջութեամբ համար մտադիր է նոր դեսպան զրկել ի Բէկ սպուրկ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳՂԻՈՅ ԲԱՐԱՄԵՆԹ

Տես լրագրոյն նախընթաց քիւր :

ԱՐԿԱՅԼԻ ԴՈՒՐՄՆ

Վեհապետական կեցոյ պաճապան նախարար

Թէ որ վեհապետական կնքոյ նորընտիր պահպան Արկայի դուքսն իւր քաջատոհմիկ բարձր պայազատութեան համեմատ շարունակ 24 տարի լորտերու խորհրդարանին մէջ աթոռ բազմելու հրաւիրուած չըլլար, անշուշտ հասարակաց խորհրդարանին մէջ անհաւատար տեղ մը բռնած պիտի ըլլար : Արկայի դուքսն բնածիր տաղանդներէն առաջինն է իւր քաջակորով վիճարանութեան յարմարութիւնն : Բոցավառ է նա որեւիցէ խնդիրներու քննութեանց մէջ, և մշտապատրաստ ի յաղթահարելու և իցէ ոք որ իրեն համակարծիք չէ : Դշանաւոր դրագէտ է միանգամայն, և հեղինակ բաղմամբ երկասիրութեանց որք կը պարունակեն աշխոյժ և վառ վառն պայքարներ աստուածաբանական, կրօնական, գիտական, հնախօսական, իրաւագիտական, քաղաքական անտեսութեան և ժամանակակից պատմութեան նիւթերու վրայ : Լորտերու խորհրդարանին մէջ յաճախ խօսք առնող և ակրողարար խօսող անգամաց մին է նա : Արդէն 1847ին լորտերու խորհրդարանին ան-

դամ եղած էր 1852ին լորտ Ապէլլոնին նախաւարութեան անգամակցեցաւ վեհապետական կնքոյն պահպանի պաշտօնով : Նոյն պաշտօնը շարունակեց նաև լորտ Բալլէրսթընի նախարարութեան մէջ 1855ին, ասկէ ետք թղթատարութեանց ընդհանուր անտուշ եղաւ :

Հանգուցեալ լորտ Տէրպիլի անկումէ զինի կրկին ստանձնեց իւր առաջին պաշտօնն այսինքն վեհապետական կնքոյն պահպան նախարարութիւնն 1859ին, և յետոյ կրկին անգամ թղթատարութեանց ընդհանուր տեսուչ կարգ եղաւ : Պ. կը տեսնենք 1868ին առաջին նախարարութեան ժամանակ Արկայի դուքսն ազատական նախարարութեան անգամակցեցաւ իբրեւ նախարար Հեղինաստանի գործոց, և սոյն պաշտօնը անընդհատ վարեց մինչև լորտ Պրիւքսէլի պահպանողական նախարարութեան գլուխ անցնելը : Տակաւին մուտնուած չէ այն նաստիկ պայքարն որ վերջերս իւր և Սթրաթեմի մարքիլին մէջ տեղի ունեցաւ, և որ քիչ մնաց բռնու լիւծան մի պիտի ունենար : Արկայի դուքսն հզօր բանախօսութեանց նիւթերն էին, լորտ Պրիւքսէլի պիտի Արկայի անտանի նկատմամբ բռնած աշխարհավարութեան քննադատութիւնն, և թուրքիոյ արեւելեան դաւառաց վիճակին բարենորոգմանց առաջարկութիւնքն : Արկայի դուքսն Անգլիոյ խորհրդարանին մէջ իւր յաղթահարիչ պերճախօսութեամբ նախորդ նախարարութեան լուծուեցէն մի քանի օր առաջ պահպանողական

նախարարութեան վերջին հարուածը տուողն է :

Արկայի դուքսն Ս. Անտրէ համարարանին խորհրդականի պաշտօնն ևս ունի : և իբրեւ տեսուչ կրակովի համարարանին սոյն քաղաքին մէջ ուսմանց յառաջացման համար գումարուած միլիոնիկն նախադաշն : Տոհմային իրաւամբք Յիլփոլիոյ արքայական տան աւագն ու Արկայի շաղի մեծն է : Հսկայական հարստութեան տէր, միանգամայն եղբայրն է սըր Լոուի մարքիլին, այն որ վէհ : Վիքտորիա թագուհոյն չորրորդ դուքսն լուրի իշխանուհոյն հետ ամուսնացած է : Այժմեան աղանդական նախարարութեան մէջ դարձեալ վեհապետական կնքոյն պահպան նախարարն է, և թէպէտ ծերացած բայց անակաւին անոյդ է մտօք և զորաւոր բանիւք :

ԼՈՐՏ ՆՈՐԹՊՐՈՒՐ

Մովային գործոց նախարար

Տակաւին յիշումներն է լորտ Նորթփրոքս : անկայն վաղեմի խորհրդականաց կարգէն կը համարուի : ասկէ կրնայ իմացուիլ թէ երիտասարդական օրջափ կանուխ ժամանակէն հրապարակային գործոց մէջ մտնած է : Սորա հայրն Պ. Յոանսի Պարլին ատենակալութեան պաշտօնի հրաւիրուած էր Պ. Նորթփրոքս ակտիւսով : Իսկ որդին հայրը 20 տարեկան էր երբ հռչակաւոր Պարլին դիւանագիտիկ եղաւ, յետոյ ներքին պաշտօնանտուշ անցնելով մինչև Հնդկաստանի գործոց և ծովային գործոց նախարար եղաւ :

Կորչաքօթի իշխանն իւր առողջութիւնն կազմեալովն վրայ Գերմանիա ուղևորեցաւ :

Կ. Պօլսոյ եւրոպական լրագիրք կը ծանուցանեն թէ՛ Ռուսիա նպատակներ է եղեր, որ Պէրսի մէջ գումարուելի Դեսպանախորհուրդն միայն Հելլենական խնդրոյն վրայ պաշտօնէ, Բաց յայնմանէ, Յունաստանի վեհա. Գէորդ թագաւորն Լոնտոն և Բարիզ ուղևորած է Հելլենական խնդիրն անձամբ պաշտպանելու համար, և թագուհին անձամբ տեսակցելով Գերմանիոյ կայսեր հետ նոյն խնդրոյն պաշտպանութիւնն խնդրեր է, և անկէ Բէրլինէն երթալու է օգոս. Ագէքսանդր կայսեր առջև, որ իւր հօրեղբայրն է, Հելլենական խնդիրն պաշտպանելու :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ

Երէք տէրութեանց՝ Ռուսիոյ, Անգլիոյ և Գաղղիոյ նորընտիր գեապաններն ուրոյն այցելութիւններով իրենց պաշտօնական վկայագրերը մատուցին Նորին կայսեր վեհափառութեան :

Ռուսիոյ գեապան Պ. Նովիքով իւր պաշտօնական ներկայացման մէջ հետեւեալ կերպիւ բռնաւ. «Իմ օգոստափառ վեհափառ Ագէքսանդր համայն Ռուսիոյ կայսրն, զինքը Ձեր վեհափառութեան ներկայացնելու պաշտօն շնորհելով ինձ՝ յանձնեց միանգամայն խաղաղութեան պաշտօն միջ: Նորին կայսերական վեհափառութեան կողմէ սոյն կարեւոր պաշտօնին թնտրուելու բարեբաղդութեամբ՝ քաջայայտ եմ որ այս երկու կառավարութեանց մէջ եղած բարեկամական յարաբերութիւնք ըստ առաջնոյն պիտի շարունակուին, և հաւաստի եմ որ առ կախ մնացած խնդիրներն Ձեր վեհափառութեան շնորհիւ փութով և արդարութեամբ պիտի լուծուին: Ինչպէս երբեմն Ձեր օգոստա. հայր Սոլիսկան Ապտ—իւ—Մէճիտի ժամանակ իբրև Ռուսիոյ գործակաւոր պաշտօններ վարելու, և ամենալաւ յարաբերութիւններ իսկ ունելու բարեբաղդութիւնն ունեցած եմ. նոյնպէս այժմ երկու նիկ կը համարիմ զիս իբրև գեապան Ձեր վեհափառութեան քով: Ներկայացնելով իմ վկայագրերս պատիւ ունիմ յանձնել Ձեր վեհափառութեան նաև իմ նախորդիս կոչուելուն թղթերն, որ իւրջատանձնած պաշտօնական նորանոր գործոց պատճառաւ չէր կարողացած անձամբ յանձնել զանոնք:»

Անգլիոյ գեապան Պ. Կօչլին բանախօսութիւնն վեհափառ Տէր,

«Իմ օգոստափառ վեհափառ թագուհին զիս իւր կողմէ Կ. Պօլսոյ յատուկ գեապան նշանակելու արժանացնելով, պատիւ ունիմ իմ վկայա-

գրերս յանձնել Ձեր կայս. վեհափառութեան: Ստանձնելով սոյն պաշտօնն որ պատասխանաւոր կը կարգուցանէ զիս, առաջին պարագայի ինն իմ վեհափառ գաղափարներ կերպիւ կատարել զայն, միևնոյն ժամանակ Անգլիոյ և թուրքիոյ մէջ եղած բարեկամական յարաբերութիւններն փափագ պիտի ներշնչեն ինձ օգտակար լինելու Ձեր վեհափառութեան և Ձեր իշխանութեան ներքե գտնուող ժողովրդեան: Երեսփոխանաց խորհրդարանին անդամակից գտնուելուս պատճառաւ հարկաւ թուրքիոյ մէջ ընդ երկար պիտի չկրնամ մնալ. սակայն Ձեր կայս. վեհափառութիւնն ներքէ ինձ աւելցնելով համազուած լինելով թէ՛ Նա առանց ցեղի և կրօնի խորթութեան իւր հպատակաց ընդհանուր բարօրութիւնն աւելցնելու փափագող է, բարեբաղդ պիտի գտնուիմ եթէ իմ ընելու ջանքերս աստ յաջողութեամբ պատկուին:»

Ահաւաստի Պ. թիսո Գաղղիոյ համարակապետութեան գեապանին բանախօսութիւնն.

«Վեհափառ Տէր, Պատիւ ունիմ Ձեր վեհափառութեան յանձնել իմ վկայագրերս որ զիս արտաքին կարգի պաշտօնով զրկուած գաղղիական հասարակապետութեան լիազօր պաշտօնակալ կը ներկայեն:

Սոյն պաշտօնին կոչելով զիս գաղղիական հասարակապետութեան նախագահն՝ լի է անկեղծ փափաքով որ և է ընդմիջում Ձեր վեհափառութեան հետ իւր գիւտնաբերական յարաբերութեանց մէջ մուտ չգտնելու, այլև ամբապնդելու այն մանրամասն կապերն որք ի բնէ անտի թուրքիան Գաղղիոյ հետ կը միացուեն: Ի մասնաւորի բարեբաղդ կը համարիմ զինքս թէ կարենամ արդիւնաւորել պաշտօն մի որ իմ անձնական զգացմանցս իսկ ըստ անհրաժեշտի կը համապատասխանէ, և ինչոյս եմ որ Ձեր կայս. վեհափառութեան բարձր հաճութիւնն պիտի գիւրացնէ ինձ նոյն պաշտօնիս լրումը:

Կ'աղաչեմ, որ Ձեր Կ. վեհափառութիւնն բարեհաճի ընդունիլ իմ սրտադին իղձերս վասն յարատեւութեան և երջանկութեան Օսմանեան Կահուն նոյնպէս յաջողութեան Պետութեան: Նորին կայսերական վեհափառութեան պատասխանն առ Պ. Նովիքով:

«Մեծապէս ուրախ եմ որ Նորին վեհափառութիւն Ագէքսանդր կայսրն զնեզ իւր ներկայացուցիչ ընտրած է իմ քով: Ձեզ պէս՝ ես ևս կը յուսամ, Պ. Դեսպան, որ մեր երկու կառավարութեանց մէջ յարաբերութիւնք հետզհետէ պիտի ամրապնդին, և չեմ երկբայիւ բնաւ որ ձեր հետ իմ առնչակցութիւնք ձեր նախորդին հետ եղածին նման լաւ պիտի լինին:

Կանութեան կողմանէ երեսփոխան և ընդհա. նուր գործակալ: Այս գործերուն մէջ անձանձիր կ'ըրաղէր նաև իրաւագիտութեան ուսումնով 1859 թուականի Երեսփոխան ընտրուեցաւ, և խորհրդարանին մէջ կարեւորութիւն ունեցող մի քանի յանձնաժողովներու ալ անդամակցեցաւ: Լորտ Բալմէլսթըն սորա լաւ յատկութիւնքն գնահատելով 1864ին ծովային գործոց նախարարի պաշտօնին բարձրացոյց, իսկ ինքն տարիէ մը ետք գանձուց նախարարի պաշտօնն ստանձնեց, և Պ. Կլէտսթըն 1868ին իւր ծովային առաջին նախարարն ըրաւ, և Զիլլերս իւր այս պաշտօնին մէջ գործադրած կարեւոր բարենորոգումներով լիովին արդարացոյց Պ. Կլէտսթընի իւր վրայ ունեցած վստահութիւնը: Սակայն իւր տարապայման աշխատութեանց պատճառաւ առողջութիւնն խանդարուելով ստիպուեցաւ թողուլ իւր պաշտօններն 1874ին, և քանի մի ամիս ետք վերստին ստանձնեց Աւստրալիոյ վերքիտիա գաւառի գաղթականութեան ընդհանուր գործակալութիւնն Անգլիոյ մէջ, և յետոյ Լանքասթրի գաւառի բարձր դատարանի պաշտօնն ընդունեց: Փորձ և գործունի մարդ, գործերու մէջ յոգնած, և տաղանդաւոր ատենարան մի է Պ. Զիլլերս և 53 տարեկան, և Պ. Կլէտսթընի արդի լաւագոյն գործակիցներէն մին:

(Շարունակելի)

Ցաւ է ինձ որ տակաւին մի քանի խնդիրներ կը մնան անլոյծ. բայց ապահով եղիք որ ջանադիր պիտի գտնուիմ անոնց ընդ փոյթ լուծուելուն, և իրաւունք ունիք որ այս մասին իմ ոգևորութեան կը լիարատարիք: Շատ ցաւեցայ որ ձեր նախորդն Կ. Պօլսէն չանցաւ իւր հրաժարման օղջոյնն ինձ տալու: Իսկ ձեր սոյն պաշտօնի կոչուելը շատ հաճելի եղած է ինձ՝ ըստօրում, ինչպէս յայտնեցիք, արդէն պաշտօն վարած էք երբեմն իմ օգոստափառ Հօրս քով:»

Նորին կայսերական վեհափառութեան պատասխանն առ Պ. Կօչլին.

«Ձեր վսեմութեան մեր քով դեսպան կարգուելը՝ վեհա. թագուհին մեր վրայ ունեցած սիրովի զգացմանց վրայ հիմնուած լինելով՝ ըզմեզ շատ գոհ ըրած է:

Ձեր վսեմութիւնն արդէն մեզի չափ կը ճանաչէ այն բարենորոգումներն, որոց մեր Պետութիւնն անցուցած տղիտից զինի պէտս ունի: Մեր ամենամեծ փափագն է տեսնել մեր Պետութեան և մեր ժողովրդոց յաջողութիւնն և բարեկարգութիւնն գարուս պիտոյց պահանջման համեմատ: Բոլոր մեր ճգուճք դէպ ի սոյն նպատակն կընային:

Ձեր վսեմութեան անձնական յատկութիւնքն մեզի համար ապահով երաշխաւորութիւն մի են զորս իբրև Վիլոյ ի գործ պիտի ածէք արդիւնաւորել այն բարեացակամ բարեկամ իրիտանական կառավարութիւնն կը տածէ դէպ ի մեր Պետութիւնն, և որք միշտ առիթ ընծայած են սոյն երկու կառավարութիւններն միեւնոյն անկեղծ բարեկամութեան կապերն դորակելու:»

Առ Պ. թիսո ուղղուած կայսերական պատասխանն գեա. չէ հրաժարման:»

Կայսերական հրամանաւ

Առևտրական նախարար վսեմ. Գառնի բաշան տէրութեան առաջին նախարար անուանեցաւ, առևտրական նախարարի պաշտօնը սկսելով:

Վսեմա. Ապէտին բաշա արտաքին գործոց նախարար անուանեցաւ փոխանակ Սալա բաշային որ պաշտօնակալ եղած է:

Միւս նախարարք, որք իրենց պաշտօնը կը սկսեն, հետեւեալն են. —

Մահմուտ Նէտիմ բաշա, ներքին գործոց նախարար, Ճէվաէթ բաշա Դատական նախարար, Ղազի Օսման բաշա, պատերազմական նախարար Միւնիֆ բաշա, հասարակային կրթութեան նախարար:

— Վաֆէ թուրք լրագիրն կը ծանուցանէ թէ՛ Բ. Դուռն շրջաբերական ծանուցագրով մի եւ-

ԱՇԽԱՏԱՆԻԹԻՒՆ

Ընկերական աշխարհին մէջ ամեն որ և իցէ ազգի յառաջագիմութեան, որևիցէ անհատի առողջակալութեան, որևիցէ առարկայի կատարելագործութեան բանալին եղող սոյն աշխատութիւնն, կենաց ուրիշ ինչ և իցէ գործողութեանց մէջ այնքան կարեւոր տեղ կը բռնէ որքան որ կենաց պահպանութիւնն ինքնին կարեւոր է:

Այս գաղալի կերպիւ հաստատուած ճշմարտութիւնն կը զգնի հետեւեալ սկզբունքներէն.

Ա. Բնութեան Արարչին իւր արարածին ճակատին վրայ անջնշ գրոյմած «բոլորս երեսօցքոց կերիցես զհայ քո՝ վճիռէն, զոր կը դաւանին ամեն բանաւոր էակներ, նոյն իսկ անոնք՝ որ ըստ վերքիտի ճիւղի, «ամբասանայ և անասունաժաշուչս աստուած մի կը դաւանին:

Բ. Մարդկային բնական լուսով, և փորձառութեան անհամար դասերէն ծագում առած բոլորական դիտութեան, որչափ որ թերի իսկ իննի, ամենակարեւոր ատենին արձակած սա ընդհանրական վճիռէն թէ «աշխատութիւնն զմարդ քաջաւորը կ'ընէ:»

Գ. Լուսաւոր խղճի բնական աղագարար ձայնն որ անպատում կերպիւ երջանիկ զգացմունք կը զգուս այն անձին հոգւոյն մէջ, որ իւր անմիջական աշխատութեամբ մեծ թէ փոքր ծառայութիւններ կը մատուցանէ մարդկութեան յա-

Այս վերջին պաշտօնը զիս յոտանձնած Բնարայն և Ֆայմիս միացեալ քաղաքաց կողմէ հասարակաց խորհրդարանին անդամ ընտրուեցաւ 1857ին: Շատ չանցած՝ Հնդկաստանի փոխ—Ատենադպիր եղաւ, և 1861էն մինչև 1866 պատերազմական գործոց փոխ—Ատենադպիր պաշտօն վարեց, և Պ. Կլէտսթըն 1868ի նախարարութեան ժամանակ կրկին ստանձնեց իւր պաշտօններն. և Պ. Կլէտսթըն Հնդկաստանի փոխարքայ անուանեց զինքը լորտ Մայօի սպանման վրայ: Աղետականաց տապալումէ վերջ ամեն որևիցէ պաշտօններէ հրաժարուեցաւ մինչև որ ներկայ աղետական նախարարութեան մէջ ծովային գործոց նախարարի պաշտօնն ստանձնեց: Բնաւորութեամբ աշխատասէր և յարատեւող հաղուաղ իւր անձերէ մին է: Ամեն կուսակցութիւնք սորա եթէ ոչ գործերը՝ սակայն բարձր յատկութիւններն ճանաչելու և յարգելու մասին բոլորովին համաձայն են:

Պ. ԶԻԼԼԵՐՍ

Պատերազմական նախարար

Սկիզբէն փափագող և հետամուտ էր արտաքին գործոց խորհրդականի պաշտաման, ինչպէս և Պ. Կօչլին: Պ. Զիլլերս գիւղի հովուի մը զաւակ է, և շատ կանուխ ամուսնացած: Աւստրալիոյ երթալով վերքիտիա գաւառին քաղաքապետներէն մին եղաւ: 1857ին Անգլիա վերադարձաւ իւր կառավարած քաղաքի գաղթական-

Թեամբ յանձնաժողով մի հաստատուելով Հաստատութեան սովորեց համար բաւական առատ դուրս մի դոյացեր է : Կըրուամբ որ յիշեալ յանձնաժողով միջոցաւ կատարուած հանգանակութեան արդիւնքն հանդերձ նուիրատու բարերարաց անուանց ցուցակաւ կարենամք հրատարակել ի մօտոյ :

Նոյնպէս կ'իմացնեն թէ՛ վսեմ. Թագուոր բաշայի միջամտութեան շնորհիւ, Երուսաղէմի Միարանութեան ներկայացուցիչ Գեր. Սիմէօն եպիսկոպոս յաջողեր է Աղէքսանդրիոյ մէջ դըտնուած Երուսաղէմի կալուածոց տէր ըլլալ 1880 Մայիս 25ին, ճիշդ այն պայմանաց համեմատ որ 1869 Ապրիլ 23է 25 թուագրեալ գաշնագրութեամբ հաստատուած են ի մէջ հանդուցեալ Գեր. իգնատուս և Գեր. Սիմէօն եպիսկոպոսաց, վսեմա. Թագուոր բաշայի նախագահած Ժողովոյն և ազգայնոց : Յիշեալ պայմանաց համեմատ նոյն կալուածոց մի մասն Աղէքսանդրիոյ ազգային եկեղեցւոյ, դպրոցի և ազգայնաց ինտաւատարութեան նպահակութիւն լինելու համար Գեր. Սիմէօն եպիսկոպոս Ս. Երուսաղէմի Միարանութեան կողմէ վսեմա. Նուպար բաշայի անունն Գեր. ըլլալու ի գործ տնուեր է, և իբրեւ անպահանջութիւն վսեմա. Նուպար բաշան անպահանջին մէջ յիշեալ Գեր. կալուածքն Աղէքսանդրիոյ Հայոց եկեղեցւոյ անուան գարձուներու համար պէտք եղած ապահովագրել ի զգին տուեր է :

Ուրախ եմք մեծապէս անստեղծ որ վսեմա. Թագուոր բաշայի միջամտութեան շնորհիւ, և Գ. Սիմէօն եպիսկոպոսի անխնայ աշխատութիւնն սոյն կնճառից խնդիրն յիշեալ տարապէս լուծուեցաւ յոգուտ Սուրբ Երուսաղէմի Միարանութեան և Աղէքսանդրիոյ ազգային եկեղեցւոյն :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային վարչութիւնն կը յայտարարէ արդոյ հասարակութեան թէ տեսնելով որ Վարդ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն Զմիւռնիոյ անուամբ տպեալ թղթագրամներն որք միայն ազգային եկեղեցիներու գործածութեան համար պատրաստուած են : Հասարակութիւնն իւր գիւրդութեան համար զանոնք եկեղեցիներէ դուրս իսկ չընթերցութեան մէջ գրած է. Տէրութեան կանոնաց դէմ եղած այսպիսի չընթերցութեան մի առաջին առնելու համար ներկայ Պաշտօնական յայտագրով կը հրաւիրէ բոլոր անոնք որ յիշեալ թղթագրամներն ունին՝ միմիայն ազգային եկեղեցիներու գործածութեան վերապահեն և կամ բերեն Ազգ. Տնտեսական խորհրդոյն յանձնելով փոխարժէքն անան : 5. Յունիս 1880

Ազգային վարչութիւն Զմիւռնիոյ

Ուրախութեամբ կ'իմանամք թէ մէկուկէս ամսէ ի վեր դադարեալ Թէրէֆան Էֆէնդ լրագիրն բարձրագոյն հրամանաւ կրկին հրատարակուի սկսելու է : Քաջք է մեզ յունալ թէ Լրագիրն անուն թերթին ևս նոյն շնորհին հանդիպի :

—Ամենա. Ս. Պատրիարք Հայոց երկու անգամ թագրեր տուած է Բ. Դուռն Թէրէֆանը—Հազը Գաթ թուրք լրագրին «Իւրտատան» վերնագրով հրատարակած յոգուածոց մի քանի կէտերն յատկապէս նշանակելով, կայսերական բարեխնամ կառավարութեան արգարանէր կամաց դէմ հրատարակուած այդ պիտի ծանր զրպարտութեանց արժանաւոր հատուցումը ընդ փոյթ արուելուն ամեն օք յուսալից և փափագող է :

ՏԵՊԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դարնան վերջին օրերէն սկսելով սաստիկ տանքերը կանխեցին նշուել քաղաքիս բնակիչները : Միջոցաւ գրեթէ միշտ շրջիներով բռնաւորուած է, ջերմի հիւսնագութիւնը շատ տեղ կը տարածուի : Արեւիկան կը զոյգ ճառագայթներէն հարուածեալ քանի մի երկրագործներ յանկարծամահ եղան քաջային աշխատութեանց մէջ : Վերջին քրքրաբեր կէսօր մօտ մարտիներու անհամար բազմութիւն քաղաքիս վրայէն անցնելով, արեւմտեան հարանէն դէպի արեւելեան հիւսիս ուղղուեցաւ, և 1—2 յամէն

զինի սոյն վնասակար թեւաւորներու չուն վերջացած էր :

—Քաղաքիս ուսանող հիւսնագործներն սուգով լինէ ի պատճառս վախճանման կայսրութեան : Ուստի ազգային սովորութեանց համեմատ այս սուգը պիտի շարունակուի : Կ'իմանամք թէ վսեմա. Հիւսնագործն յունաց Այի Ֆօթիին եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան յանուկ պաշտօն կատարել պիտի տայ վսեմ հոգեւոյ կայսրութեան Գաղաքիս բոլոր հիւսնագործներն իրենց ցաւակցութիւնն պաշտօնագէտ յայտնեցին ուսանող հիւսնագործին, և երեք օր անկախեալ դրօշակ քաջերն ի նշան սգոյ :

—Հինգշաբթի առաւօտ հասաւ մեր նաւահանգիստն Մէլքօն անուն չորհրդան, որոյ մէջ էին Տիկին Կոչըն և իւր որդիքն : Իր և կէսօրէն զինի մեկնեցաւ Կ. Պօլիս երթալու : Քաղաքիս բրիտանական հիւսնագործն փութաց ի շրջանուն այցելու լինել յիշեալ Տիկնոյ :

—Քաղաքիս Բոնթիս կոչուած թաղը այդպէս նոյն նշանաւոր մի անցեալ շաբաթ օր ձկնորս մի սպանեց զինքն անոր յարձակմանց դէմ պաշտպանելու առնել : Մարդասպան կառավարութեան ձեռքն է :

—Պարնապատ գիւղի տնտեսի Քը մէջ երկու յոյն գիւղով կռուելու առնել, մին դաշայի անստիկ հաջողածով գետին կը տապալէ միւսը, որ անմիջապէս կը մեռնի : Մարդասպանը բռնուեցով կանաւարութեան յանձնուեցաւ :

—Միշտ փոփոցին մէջ երեքշաբթի կէսօր Ժամանակ յոյն երիտասարդ մի Հայ պատանւոյ մի ձեռքէն 30 արծաթ մեծիս յափշտակելով կը փախչէ : Թշուառ պատանին արտասուանից գոչելով ետէն կը վազէ, ոչ ոք չարագործին մօտեցաւ կ'իջնէր տեսնելով որ անոր ձեռքին կը փախչէր : Այի Նիքօլա կոչուած յունաց եկեղեցւոյ կողմերը անհետացաւ շարագործն, իւրեք ճարի պատանին դեռ ևս յուսահատաբար կուրաց իւր հորունտին վրայ :

—Քաղաքիս արեւելեան կողմը Նիֆ կոչուած գիւղի մօտերն Ինճիրի Բունարի կողմը շարակաւութեամբ կրակ ձգող վէրի օդու Ային 13 տարուան համար կալանաւոր աշխատութեան դատապարտուեցաւ Եփեսոս գործութեան Ատենի կողմէ : Յիշեալ շարագործի ձգած հրդեհէն 6000 ծառ հրոյ ճարակ եղած էին :

ԱՅԼԵՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կը հաստատեն թէ վսեմա. Նուպար բաշայի դուստր օրիորդ Զիպա նշանուեր է բոլորիացի մեծահարուստ ազնուական երիտասարդի մը, որ Բողէնի գլխութեան վաղեմի ազնուական Տունէ, է միայն կը պատկանի : Վսեմա. Նուպար բաշան ընտանեօք մօտերն կը մեկնի յերոսոպա իւր դուստր հարսանեաց ներկայ գտնուելու : Կըսուի նաեւ թէ՛ Պ. տը Պիլմարք իշխանն, որ արդէն մոտերիմ յարաբերութիւններ ունի հայազգի վսեմա. բաշային հետ, յիշեալ ամուսնութեան մասին ներազարտի կողմէ վկայներէն մին պիտի լինի :

—Յար տւեալ Պատրիարք կ'ըսէ թէ՛ Բ. Դուռը քանի մի ամիս պայմանաւոր ուղեր է Մօնթէնէկոյի տնտեսու տեղերն նմա յանձնելու համար :

—Դապուլէն Տէյլի Նիւզ լրագրին ուղղուած հեռագիր մի կը ժամուցանէ թէ՛ քեքանացի ուստաւորներ հոն հասեր են Սմիթանէն վախճելով, ուրեղ ձեռքակալուած էին ընդ ամբաստանութեամբ թէ այնպիսի նամակներ կը ժամանէին որք Պառնարայի, Թուրքաստանի և Խոնքանտի Ժողովուրդները կը դիմէին ընդհանուր անկողնութեան մի նպատակ ունենալով Ռեւոլյուցիոն Զինաց օգնելու :

—Ամերիկայի խմբագիրներէն մին տարեկան 650.000 ֆրանք սահմաներ է Պիլմարք իշխանին որ բարեհաճի Երոսոպական քաղաքականութեան վրայ դէպ շաբաթ մի անգամ իւր հեռատու կարծիքներն պարունակող առ նուազ 20 տող յոգուած ուղղելու նմա : Բայց Պիլմարք իշխանն իւր բաղումը զրադանաց պատճառաւ մերժեց ի նոյն առաջարկութիւնն :

—Գերմանական պետութեան վիճակագրութեան պաշտօնատունը հրատարակեց զերմա-

նացի գաղթականաց ընդհանուր ցուցակը, որով կը տեսնուի թէ՛ 1880 Յունուար, Փետրուար և Մարտ ամիսոց մէջ 13.062 անձինք գաղթեցին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներն :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլինի Դեպքանախորհուրդն այսօր (18 Յունիս Ն. Տ.) երկրորդ նիստը բրաւ :

Մեծ տէրութեանց դեսպաններուն Բ. Դուռը տուած հաւաքական ծանուցագիրն Հիւսիսական Մօնթէնէկոյի և Հայկական վնդիւրներն կը պարունակէ : Հայկական վնդիւր մասին Պէրլինի գաշնագրին 617 յօդուածը յիշատակելով կ'ըսէ թէ Բ. Դուռն Հայաստանի մէջ ընկու բարեկրօնգութեան դեռ չեն կատարուած, և այս մասին ինչ միջոցներ որ պէտք էին ձեռք առնուլ տակաւին մեծ տէրութեանց չեն հաղորդուած : Միւս կողմէն Հայաստանի Երեւանի գործակալը չեն դադարած տեսակ տեսակ ծանր հարստահարութիւնները յայտագրել զորս չէր քեզը և քիւրտք քործարարած են ի վնաս Հայոց :

Ուստի տէրութիւնը կ'ը հրաւիրեն զԲ. Դուռն ընդ փոյթ հաղորդել իրենց իւր որոշումը :

Վերջապէս ծանուցագիրն կ'ըսէ անգամ Բ. Դուռն ուշադրութիւնը կը հրաւիրէ պատասխանատուութեան ծանուցութեան վրայ որ կը ծագի Պէրլինի գաշնագրի գործադրութեան յայտադրումէն : Գործադրութիւն, զոր Թուրքիոյ և Եւրոպիոյ շահերն հաւասարապէս կը պահանջեն :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՅԻՍՆ : Գիներն հաստատուեն են և բարձրանալու վրայ : Տեղի ունեցած վաճառմանքն են 123 կողով, Գարահիսար տեսակէն անցեալ տարուան ապրանքէն եղած վաճառմանց եթէն եկու մէջ գինն է 240 գուրուշ չէքին : Իսկ Եփեսոս ընտուտ տեսակէն քա վէճակ պայմանաւ եղած վաճառմանց գինն է 220—222 գուրուշ չէքին :

ԲԱՄՊԱԿ : Գիներն հետոյցեալ կ'ըսեն : Վաճառմանք տեղի չունեցան :

ԾԱՆՈԹՅՈՒՆ

ԾԱՌԱՌ ԲԱՂՆԻՐ Ի ԲՈՒՆԾԱ

Սոյն հաստատութեան վարչութիւնը փափաքելով իւր յաճախորդաց նորանոր դիւրութիւններ տալ և աւելի դիւրամատչելի ընել, կը փութայ նոր սակագին մ'որոշել, այսինքն

30 տոննակի գին Մէծիս մէկուկէս 30

Դաւանալ մէծիս երեք

Այս անգամները պիտի ընդունուին նաեւ Լուքային արձաններն գիւնացը Պ. Պանիլին տնօրէնութեան ներքեւ ծովուն վրայ գտնուած նորահաստատ բաղնիքէն :

Եթէ Հայոց լեռներէն ընտանիքներ ուղեր գալի իրենց դիւրութիւն տալու համար վարչութիւնն Օմիպիական պիտի յատկացնէ որպէսզի որոշեալ ժամերու մէջ երթնեն :

ՏՆՆՆՆՆՆ լուրերը յարգելու Եւրոպական Ընտանեաց և Գիւնացի քանսիոնն հաստատութեանց համար դիւրութիւններ պիտի տնօրէնուի Թ. Գ. Թրամիլայները ամեն 25 րոպէն պիտի երթնեն :

Societe des quais de Smyrne

ԱԶԳԱՆԵՐՍՏԱԿԱՆ

Այն վաճառականները որք փէի ընկերութեան վերաբերեալ արոց ընկալագրոյ մէջ որ և իցէ սխալմունք մը կը նշանակեն, այդ անխառնաբեր գործուած գրասենեակը ներկայանալ զանազան սխալմունքը հաստատուելէն յետոյ գումարը նորէն վերագործուելու է :

Իզմիր, 10 Մայիս 1880 :

Տէր լրագրոյն, Գ. Վ. Գ. Պալլապի :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԾԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ